

**ԱԳԱՐԱԿԱԶՈՐԻ ԿԱՄՐՋԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

**Բանալի բառեր՝** Ագարակաձոր, պարսկերեն արձանագրություն, կամուրջ, արաբափառ, սալաքար, Վայոց ձոր, ուշ միջնադար, Եղեգնաձոր:

Հայաստանի Հանրապետության տարածքում միջնադարյան հոյակերտ կամուրջներից է Վայոց Ձորի մարզկենտրոն Եղեգնաձորի մոտակայքում, Արփա գետի վրա գտնվող Ագարակաձորի կամուրջը: Այս անվանումը, ինչպես հայտնի է, կամուրջը ստացել է այն պատճառով, որ կապ է հաստատում Ագարակաձոր (նախկին Այար, Այառ, Ագյար) գյուղի հետ:

Այս գեղեցիկ միակամար կամուրջը հայտնի է նաև մի քանի այլ անվանումներով՝ «Սուր կամուրջ», «Դադալի, Դատալի, կամ Դադալուի կամուրջ» և կամ «Դալի-փերան»<sup>1</sup>: Եթե «Սուր կամուրջ» անվանումը նկարագրում է նրա ձևը, ապա անհասկանալի է, թե որտեղից է գալիս «Դադալի կամ Դադալուի կամուրջ»: Անհայտ է մնացել, թե ինչ կապ կարող է ունենալ ոմն Դադալը կամրջի հետ: Նշենք, որ Դադալ անունը հանդիպում էր ուշ միջնադարում թե՛ մուսուլմանների և թերևս նաև հայերի շրջանում: Հրաչյա Աճառյանը իր անձնանունների բառարանում անդրադարձել է Տաթալի կամ Դաթալի անձնանուններին<sup>2</sup>: Հայերի մոտ Դադալ անվան առկայության մասին են վկայում նաև մինչ այժմ գործածվող Դադալյան ազգանունը:

---

<sup>1</sup> ՀՀՇՏԲ 1986, 20:

<sup>2</sup> Աճառյան 1962, 135:

Հետաքրքրական է «Դալի-փերան» անվանումը, որը պարսկերենից կարելի է թարգմանել «ճախրող անգղներ»<sup>3</sup>: Սա, հավանաբար, կապված է կամրջի շրջակայքում տարածված գիշատիչ թռչունների առկայության հետ, որոնց կարելի է այսօր էլ հանդիպել այնտեղ:

Ագարակաձորի կամուրջը հայտնի է նաև իր արաբատառ արձանագրությամբ:

Կամուրջը, ըստ մեր դիտարկումների, առաջին անգամ հիշատակել են Քաջբերունին<sup>4</sup> և Ե. Լալայանը<sup>5</sup>: Սակայն, նրանցից ոչ ոք չի նշում նրա պարսկերեն արձանագրության մասին: ՀՀ պետական արխիվում պահվող կամրջի հայերեն և ռուսերեն 1949 թ.-ի հաշվառման քարտերում պարսկերեն արձանագրության մասին նույնպես ոչինչ չի ասվում<sup>6</sup>: Պարսկերեն արձանագրությունը հիշատակում է Վ. Հարությունյանը՝ կամրջի չափագրական և շինարարական նկարագրության մեջ<sup>7</sup>:



<sup>3</sup> Steingass 1963: 239, 499: دال /dāl/ պարսկերեն նշանակում է անգղ (Gyps fulvus), տե՛ս <https://fa.wikipedia.org/wiki/کَرکس>

<sup>4</sup> Քաջբերունի 2003, 102:

<sup>5</sup> Լալայան 1904, 258:

<sup>6</sup> Ֆոնդ 1551-22:

<sup>7</sup> Հարությունյան 1960, 108-109:

Չնայած, որ աղբյուրները չեն հաղորդում կամրջի հիմնադրման վերաբերյալ տվյալներ, սակայն, հայ պատմագիտական և հնագիտական ավանդության մեջ ամուր համոզմունք կա, որ այն կառուցվել է XIII դարում<sup>8</sup>, այլ ոչ թե XVII դարում, ինչպես գրում է Վ. Հարությունյանը: Ի թիվս այլոց, Հ. Մելքոնյանը նույնպես կարծում է, որ կամուրջը կառուցվել է Օրբելյանների կողմից և Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի մաս է կազմել<sup>9</sup>: Կամուրջը Եղեգնաձորի և Ագարակաձորի բնակիչների համար ընդհուպ մինչև 1970-ականները Արփան անցնելու թերևս ամենակարճ միջոցն է եղել<sup>10</sup>, ինչի լավագույն վկայությունն է վերը նշված կամրջի հաշվառման քարտերին կից առկա լուսանկարներից մեկը, որը պատկերում է նրա վրայով անցնող մարդկանց<sup>11</sup>:

Կամրջի ուշադիր զննումը հստակորեն ցույց է տալիս վերջինիս վերանորոգումների հետքերը՝ պատերի շարվածքում և այլ մասերում տարբեր չափի, տարբեր ժամանակներում տեղադրված և բազմազան տեսակի քարերի օգտագործումը: Խորհրդային ժամանակահատվածում կամուրջը վերանորոգվել է առնվազն երկու անգամ՝ 1957 թ.-ին<sup>12</sup> և 1970 թ.-ին<sup>13</sup>: Ըստ Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ-ի կայքէջի՝ «միայն 1985-1986 թթ. Աշոտ Խալաթյանի գլխավորությամբ իրականացված ամրակայման աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ պահ-

<sup>8</sup> Եղիազարյան 1955, 38: ՀՍՀ 1974, 50: ՀՀՇՏԲ 1986, 20:

<sup>9</sup> Բանավոր հաղորդում: Ճանապարհի վայրցձորյան հատվածի մասին տե՛ս Մելքոնյան 2014: Տե՛ս նաև Բաբաջանյան, Ֆրանկլին 2019: 127: ՀՍՀ 1974: 50: ՀՀՇՏԲ 1986: 20:

<sup>10</sup> <https://hushardzan.am/archives/6100>

<sup>11</sup> Ֆոնդ 1551-22 կից լուսանկարներ:

<sup>12</sup> Հարությունյան 1960, 109;

<sup>13</sup> Եղեգնաձորի բնակիչ, նկարիչ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի նախկին տնօրեն Կամսար Սահակյանի բանավոր հաղորդմամբ:

պանել կամրջի ներկայիս տեսքը, պայմանով, որ այն այլևս նախատեսված չէր լինելու տրանսպորտային միջոցների տեղաշարժի համար»<sup>14</sup>:



Ինչպես արդեն նշեցինք, Ագարակաձորի կամուրջը հանրահայտ է նաև իր արաբատառ՝ պարսկերեն արձանագրությամբ: Այն փորագրված է ուղղանկյուն սալաքարի վրա, որը տեղադրված է կառույցի արևելյան՝ դեպի Վարդաբլուր սարը նայող պատի մեջ: Մեր կարծիքով, հավանական է, որ արձանագրությունը պահպանված է մասնակիորեն: Ինչպես ստորև կտեսնենք, արձանագրության հաղորդած կցկտուր տեղեկությունը և կողք-կողքի նմանատիպ երկու ուղղանկյուն սալաքարերի առկայությունը հուշում են, որ այն նախապես փորագրված է եղել այդ երկու սալաքարերի վրա, սակայն աջ սալաքարի մակերեսը (որի վրա, ենթադրաբար եղել է արձանագրության սկիզբը) ամբողջովին անհետացել

---

<sup>14</sup> <https://hushardzan.am/archives/6100>

է քարի քայքայման՝ հողմահարության կամ այլ ներգործության պատճառով: Մեզ հասած արձանագրությունը նույնպես տեղ-տեղ քայքայված վիճակում է:

Բարձրության վրա գտնվելու պատճառով արձանագրությունը մատչելի չէ մոտիկից ուսումնասիրման համար՝ առանց հատուկ լեռնագնացային միջոցների, ուստի մենք այն ուսումնասիրել ենք հեռադիտակով՝ գետի ափին կանգնած: Նույն պատճառով հնարավոր չէ նաև տալ արձանագրությունը պարունակող սալաքարի չափերը:

Արձանագրությունը բաղկացած է երեք տողից: Աջ և ձախ կողմերում քարը վնասված է, և ուստի գիրը դժվար ընթեռնելի է:

Արձանագրությունը հետևյալն է.

1 [...] سنه صد و هف [تاد] ?

2 [...] دو سال [..] .

3 [...] صاحبه مرک/س [...]

Թարգմանությունը.

1 [...] տարի? հարյուր և յոթանասուն

2 [...] երկու տարի

3 տերն/իրականացնողն է Մարք/ս [...]

Արձանագրությունը անսովոր է նրանով, որ դրանում օգտագործված են պարսկերեն թվականներ՝ արաբականների փոխարեն: Ինչպես հայտնի է, մուսուլմանական թե՛ տապանաքարային, և թե՛ շինարարական վիճագրության մեջ միջնադարում, սովորաբար, օգտագործվում են արաբա-

կան թվականներ: Բացի այդ, արձանագրության մեջ, «տարի» բառը օգտագործված է երկու անգամ՝ նախ թվականից առաջ դրված է արաբերեն سنة -ն (եթե այդ բառի մեր ընթերցումը ճիշտ է), այնուհետև թվականից հետո դրված է պարսկերեն سال «տարի» բառը: Այստեղ աչքի է ընկնում պարսկերենի սխալ օգտագործումը. سال բառը պետք է դրվեր թվականից առաջ՝ իզաֆետի տեսքով: Ճիշտ պարսկերենով պետք է լիներ

sāne sād-o häftād-o do

սակայն գրվել է

sāne-ye sād-o häftād-o do sāl

հավանաբար, քանի որ sane բառը դրվել է թվականների սկզբում՝ առաջին տողում, պարսկերեն նույն նշանակությամբ سال-ը դրվել է թվականներից հետո՝ երկրորդ տողում:

صاحبه սահեբ, կամ արաբերենի առոգանությամբ սահիբ բառը արձանագրության մեջ օգտագործվում է արաբերեն 4 պատկանելություն ցույց տվող դերանունով, այսինքն «նրա տերն է Մարգ../Մարք../Մարս...ը»<sup>15</sup>: Տեսականորեն հնարավոր է նաև որ صاحبه-ը օգտագործված լինի sahebe (արաբերեն صاحبة s.ahibatun) «տիրուհի» նշանակությամբ («Տիրուհի Մարգ../Մարք../Մարս...ը»), սակայն, մենք այս տարբերակը հավանական չենք համարում:

Կամրջի արձանագրությունը առանձնանում է նաև նրանով, որ «հարյուրից» առաջ բաց է թողնված «հազար» թվականը, հավանաբար տեղ խնայելու նպատակով: Ուստի, ըստ մեր ընթերցման, արձանագրությունը նշում է 1172 հիջրայի թվականը:

---

<sup>15</sup> Հավանականություն կա, որ ածնանվան սկիզբը լինի նաև Մերգ..., Մերք..., Մորգ..., Մորք, Մերս../Մորս ... , սակայն մենք այս տարբերակները չենք դիտարկում:

Այսպիսով, մեր համոզմամբ, արձանագրությունը ակըն-  
հայտորեն առնչվում է կամրջի վերանորոգման հետ, թե-  
կուզև այն չի նշում «կամուրջ» (պարսկերեն کج փոլ կամ արա-  
բերեն جسر ջիսր) բառը (սա կարող էր փորագրված լինել աջ  
քարի վրա):

Ինչ վերաբերում է արձանագրության գրատեսակին,  
ապա այն փորագրված է նասիտվ՝ նասթալիք գրատեսակի  
էլեմենտներով, որոնք են «հա» տառի օգտագործումը փ-  
տեսքով և سال «սալ» բառը: Հետաքրքրական է, որ «ֆա»,  
նրա վերևի կետիկի և «միմ» տառերի փորագրման համար  
օգտագործվել է կլոր կաղապար:

Այն, որ գիրը գրված է մակերեսի երկայնքով, այլ ոչ թե  
լայնական, մեր կարծիքով, բացառում է, որ արձանագրու-  
թյան սալաքարը լինի հին տապանաքար և կրկնօգտագործ-  
ված լինի որպես պատրաստի հղկված շինանյութ: Այսինքն,  
նորից կարող ենք ասել, որ արձանագրությունը կապ ունի  
կամրջի հետ: Այն նշում է 1172 հիջրայի թվականը, որը հա-  
մապատասխանում է գրիգորյան տոմարի 1758 թվականին:  
Մեր կարծիքով արձանագրությունը հաղորդում է 1758 թ.-ին  
կամրջի վերանորոգման մասին և դրա հովանավորողի՝  
Մարգ.../Մարք... կամ Մարս... անունով անձնավորության  
մասին, որի անվան վերջին հատվածը (ծախ կողմում)  
ջնջված է և անընթեռնելի:

Անգլիացի առևտրականների հաշվետվություններում  
նշված է, որ XVII-XVIII դդ. բավականին աշխուժանում է մե-  
տաքսի ճանապարհով տարվող առևտուրը, և հայ վաճառա-  
կանները մեծ դեր են խաղում Թուրքիայի, Պարսկաստանի  
և Եվրոպայի միջև տարվող առևտրի մեջ<sup>16</sup>: Ուստի զարմա-  
նալի չէ Ագարակաձորի կամրջի վերանորոգումը XVIII դա-  
րում՝ մասնավորապես 1758 թվականին, ինչպես մենք կար-

---

<sup>16</sup> Մարտիրոսյան 1989: 93

ծում ենք հաղորդում է արձանագրությունը, առավել ևս, որ այն մինչ այդ հանդիսացել է կարևոր տարր Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի վայոցձորյան հատվածում: Այս ճանապարհից օգտվել են նաև օտար առևտրականները: XVII դարում, օրինակ, ռուս առևտրական Ֆեդոտ Կոտովը, ով նկարագրում է Արդեբիլ, Ջուղա, Երևան, Էջմիածին բնակավայրերը, ամենայն հավանականությամբ անցել է դրանով<sup>17</sup>:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Աճառյան Հ.** 1962, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երևան:

**Բաբաջանյան Ա., Ֆրանկլին Ք.** 2019, Միջնադարյան մշակութային լանդշաֆտը Վայոց Ձորում՝ Մետաքսի ճանապարհի համակարգում, ՀԱԻԱ-3, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 3, Երևան, էջ 125-136:

**Եղիազարյան Հ.** 1955, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան:

**Հարությունյան Վ.** 1960, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան:

**ՀՀՇՏԲ** 1986, Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 1 Ա-Դ, չորս հատորով, Երևան:

**ՀՍՀ** 1974, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1: Ա-Արգինա, Երևան:

**Լալայեան Ե.** 1904, Արփաչայի հովիտ: Շարուր-Դարալագեազի գաւառ, Ազգագրական հանդէս, Իններորդ տարի, գիրք XII, Թիֆլիս, էջ 252-262:

**Մարտիրոսյան Հ.** 1989, Հայաստանը Մետաքսի ճանապարհի խաչուղիներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1989 (4), Երևան, էջ 85-94:

---

<sup>17</sup> [http://az.lib.ru/k/kotow\\_f\\_a/text\\_1924\\_hozhdenie\\_kuptza\\_kotova.shtml](http://az.lib.ru/k/kotow_f_a/text_1924_hozhdenie_kuptza_kotova.shtml)



**Մելքոնյան Հ.** 2014, Մետաքսի ճանապարհի վայրցձորյան հանգույցի պաշտպանական համակարգը, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Հայագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, 17-19 հոկտեմբերի, 2013, Ձեկուցումների ժողովածու, էջ 203-205:

**Քաջբերունի (Գաբրիել Տեր-Սահակյան)** 2003, Ճանապարհորդային նկատողություններ, Երևան:

**Steingass F. 1963**, A Comprehensive Persian-English Dictionary including the Arabic Words and Phrases to be met with in Persian Literature, by F. Steingass Phd, London, 1963.

<https://hushardzan.am/archives/6100> Վայրց Ձորի կամուրջները, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն պետական ոչ առևտրային կազմակերպություն

[http://az.lib.ru/k/kotow\\_f\\_a/text\\_1924\\_hozhdenie\\_kuptza\\_kotova.shtml](http://az.lib.ru/k/kotow_f_a/text_1924_hozhdenie_kuptza_kotova.shtml), Котов Федот Афанасьевич, Хождение купца Федота Котова в Персию.

**Տիգրան Միրայելյան** - ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտ, Արևելյան աղբյուրագիտության և  
պատմագրության բաժին, գիտաշխատող,  
mtigran2002@yahoo.com

## THE PERSIAN INSCRIPTION OF AGARAKADZOR BRIDGE

**Keywords:** *Agarakadzor, Persian inscription, bridge, Arabian letter, cobblestone, Vayots Dzor, Late Middle Ages, Yeghegnadzor.*

Agarakadzor bridge is one of gorgeous Armenian bridges in Vayots Dzor marz (province) of the Republic of Armenia. It is located near the capital of the marz Yeghegnadzor over river Arpa and leads to Agarakadzor village (former Ayar or Agyar).

Agarakadzor bridge is also known for its Persian inscription. Despite the historical accounts give no information on the establishment of the bridge, the Armenian historical and archaeological traditions confidently point out that the bridge was established in the

13<sup>th</sup> century being a part of Dvin-Part'av (Barda) route. Archeologist and Armenologist Husik Melkonyan, among others, also believes that the bridge was established by Oribelian princely dynasty in the 13<sup>th</sup> century to serve this very important commercial and military route. Until 1970s the bridge was the shortest way for crossing the river Arpa for the inhabitants of Agarkadzor village.

The visual study of the bridge - stones of various colors and forms used in walls of the bridge easily reveal traces of numerous reconstructions. During Soviet times the bridge was reconstructed in 1958 and 1970, while the website of one state body for preservation of monuments mentions about another repair in 1985-1986.

We have studied the Persian inscription (located at high position in the wall looking at Vardabloor mount - therefore we have examined it using binocular) carved in three rows as follows:

1	[...] سنه صد و هف[تاد] ؟
2	[. . . ] دو سال [..ا]
3	صاحبه مرک/س[...]

Translation:

1	[...] year? one hundred and seventy
2	[...] two year
3	owner/executor Mark/s [...]

As seen, the inscription is extraordinary by the fact that Persian numerals are used instead of Arabic ones as traditionally applied in medieval Muslim gravestones and constructional inscriptions. Also, the word year was used two times - سنه (Arabic) before and سال (Persian) after the numerals. We also noted a wrong use of the Persian *ezafe* with the word سال. At the same time, one can see that the numeral 'one thousand', in our opinion, is omitted before the numeral 'one hundred'. Therefore, we believe that 172 should be interpreted as 1172 of the Hijri year that is equal to 1758 of the Gregorian calendar. As a whole, we think that the inscription may have covered two stone slabs: unfortunately the beginning of the inscription was erased because of weathering or other mechanical influence. We also can mention that the inscription is made in *naskh*

handwriting with elements of Nastaliq (ﻫﺎ 'ha' and the word سال). Another interesting circumstance related to the technique of carving is that a round metallic mold was used to carve letters 'fa', dot over it and 'mim'.

Summarizing we would like to mention that the inscription on Agarakadzor bridge in our opinion communicates the year of a repair of this structure - 1758 probably by someone whose name started with Marg/k... or Mars.... As the bridge was an important element of the Dvin-Part'av (Barda) section of the Silk Route, its reconstruction in the 18<sup>th</sup> century is no surprise. In the 17-18<sup>th</sup> centuries the Silk Route trade intensified and, as known, the Armenian merchants were playing a prominent role in the commerce between Turkey, Iran and Europe. Foreign merchants should also have used part of this route in Vayots Dzor. Thus, a Russian merchant of the 17<sup>th</sup> century Fedot Kotov described towns of Ardebil, Jugha (Julfa or Jolfa), Yerevan, Ejmiatsin and probably should have passed this route.

**Tigran Mikayelyan** - *Institute of Oriental Studies NAS RA,  
Department of Source Studies and Historiography, Researcher,  
mtigran2002@yahoo.com*